

**ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

<b>Պաշտոնի (գրադունքի) անվանումը</b>		Էլեկտրասարքավորումների, ուժային և լուսավորող ցանցերի էլեկտրամոնտաժող անվանումը
<b>Պերը</b>		Էլեկտրամոնտաժողը իրականացում է սարքավորումների ընթացիկ և կապիտալ նորոգման գանազան փականագործական աշխատանքներ, տեղակայում էլեկտրա - կառուցվածքներ, մալուխային ցանցեր և լուսավորության հաղորդագծեր ու ցանցեր:
<b>Խնդիրների բնագավառ 1</b>		Մոնտաժային գծագրերի ու սխեմաների ուսումնասիրում և նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը իրականացում է մասնագիտական աշխատանքային գծագրերի և սխեմաների ուսումնասիրություն և նախապատրաստում անհրաժեշտ գործիքներ, սարքեր և նյութեր:	
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• կարողալ աշխատանքային գծագրեր</li> <li>• կատարել էսքիզներ</li> <li>• նախապատրաստել գործիքներ և սարքեր</li> <li>• նախապատրաստել անհրաժեշտ նյութեր և հանգույցներ:</li> </ul>	
<b>Խնդիրների բնագավառ 2</b>		Պահպանելով սահմանված տեխնոլոգիան տեղակայել սարքավորումները, դողերը, հաղորդալարերը և մալուխները:
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը համապատասխան գծագրերի տեղակայում է բաշխիչ պահարաններն ու վահանակները, լուսատուները, հաղորդալարերն ու մալուխները՝ ըստ նշանակության:	
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• տեղակայում է բաշխիչ պահարաններն ու վահանակները ըստ նշանակության և չափանիշների՝ պահպանելով տեխնոլոգիական պահանջները</li> <li>• տեղակայում է լուսատուներն ըստ նշանակության և չափանիշների՝ պահպանելով տեխնոլոգիական պահանջները</li> <li>• տեղակայում է հաղորդալարերը, մալուխները և դողերն ըստ նշանակության և չափանիշների՝ պահպանելով տեխնոլոգիական պահանջները</li> </ul>	
<b>Խնդիրների բնագավառ 3</b>		Պահպանելով սահմանված տեխնոլոգիան կատարել էլեկտրամոնտաժային աշխատանքներ:
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը համապատասխան գծագրերի մոնտաժում է սարքավորումները, դողերը, հաղորդալարերը և մալուխները:	
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• էլեկտրամոնտաժում է բաշխիչ պահարաններն ու վահանակները ըստ էլեկտրական սխեմաների՝ պահպանելով տեխնոլոգիական պահանջները</li> <li>• էլեկտրամոնտաժում է լուսատուներն ըստ էլեկտրական սխեմաների՝ պահպանելով տեխնոլոգիական պահանջները</li> <li>• էլեկտրամոնտաժում է հաղորդալարերը, մալուխները և դողերը ըստ էլեկտրական սխեմաների՝ պահպանելով տեխնոլոգիական պահանջները:</li> </ul>	
<b>Խնդիրների բնագավառ 4</b>		Տեղակայված սարքավորումների էլեկտրամոնտաժման ստուգում և փորձարկում:
<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը համապատասխան գծագրերի ստուգում և փորձարկում է կատարված էլեկտրամոնտաժային աշխատանքները՝ պահպանելով տեխնոլոգիական պահանջները:	
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• տեղակայվածության և մոնտաժի տեսողական ստուգում</li> <li>• դետալների և հանգույցների տեղակայման որակի ստուգում</li> <li>• էլեկտրամոնտաժի փորձարկում՝ պահպանելով տեխնոլոգիական պահանջները:</li> </ul>	
<b>Խնդիրների բնագավառ 5</b>		Խորհրդատվություն շահագործողներին

<b>Աշխատանքային գործընթացը</b>	Էլեկտրամոնտաժողը շահագործողներին անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրում տարբեր սարքերի պահպանման, շահագործման, սպասարկման հարցերի վերաբերյալ:
<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• տալ շահագործողներին տեղակայվածության բացատրություն</li> <li>• տալ շահագործողներին էլեկտրամոնտաժման բացատրություն</li> <li>• տալ շահագործողներին սպասարկման բացատրություն</li> </ul>
<b>Պատասխատվությունը</b>	Էլեկտրամոնտաժողը պատասխանատու է. <ul style="list-style-type: none"> <li>• տեղակայման և մոնտաժման աշխատանքների որակյալ կատարման համար</li> <li>• նյութերը խնայողաբար օգտագործելու համար</li> <li>• ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար</li> <li>• աշխատանքների հետ կապված ծախսերի մասին ճիշտ, տեղեկատվություն տրամադրելու համար</li> <li>• տեխնիկական փաստաթղթերը ճիշտ լրացնելու համար:</li> </ul>
<b>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</b>	
<b>Լեզուներ</b>	հայերեն - գերազանց մեկ օտար լեզու - բավարար
<b>Համակարգիչ</b>	MS Word, MS Excel - բավարար Internet Explorer` բավարար
<b>Գիտելիքները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրատեխնիկայի հիմունքները</li> <li>• ճարտարագիտական գրաֆիկա</li> <li>• օգտագործվող նյութերի տեսակները և հատկությունները</li> <li>• մոնտաժի համար անհրաժեշտ սարքավորումների և գործիքների նշանակությունները և աշխատանքների սկզբունքները</li> <li>• էլեկտրամոնտաժային սարքերի և կոնստրուկցիաների նշանակությունները, հատկությունները և մակնիշավորումը</li> <li>• հողակցման տեսակները և նշանակությունը:</li> </ul>
<b>Կարողությունները և հմտությունները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• աշխատանքային տեղի և գործիքների ճիշտ նախապատրաստում</li> <li>• տեղակայման և մոնտաժային սխեմաների ճիշտ մեկնաբանում</li> <li>• մոնտաժի ճիշտ և որակյալ կատարում</li> <li>• կատարված մոնտաժի ստուգում և փորձարկում:</li> </ul>
<b>Վերաբերմունքը</b>	Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, նորը բնկալող:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

### ԱՐՀԵՍՏԱՎՈՐԻ «ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՈՒԺԱՅԻՆ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՂ ՑԱՆՅԵՐԻ ԷԼԵԿՏՐԱՄՈՆՏԱԺՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Արհեստավորի «Էլեկտրասարքավորումների, ուժային և լուսավորող ցանցերի էլեկտրամոնտաժող» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. պետական կրթական (որակավորման) չափորոշի բոլոր մոդուլների համապատասխան ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է համալիր թեստային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող՝ ընդհանուր թվով 40 հարցից:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեստային առաջադրանքի հարցերի առնվազն 95%-ին:

2. մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել հետևյալ գործողությունները՝

- նախօրոք կշռված հումքից համալիր աշխատանքների միջոցով՝ ըստ տրված աշխատանքային քարտի կամ էսքիզի, առավելագույնը 30 ժամում պատրաստել միջին բարդության ոսկերչական իր, բերել այն վերջնական տեսքի և կատարել դրա հանձնում՝ ըստ սահմանված կարգի:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշով սահմանված՝ համապատասխան կատարման չափանիշներին համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները: